

տակ խաղաղութեան յո՞ւ դիմեալ եր-
թաս . հայր հայրենեաց , և ուր տա-
րագիր մեկնեսցիս . “ այր այգպիսի ծը-
նեալ ’ի փրկել զհայրենիս տարաշխար-
հիկ մեռանիցի . բարերարին հայրե-
նեաց զլասցի հողն գերեզմանի . . . Ե-
րանի տամ ես վայրացն որ ընդունին
զնա . . . հէտ և թշուառական է քաղաք
որ զնա ’ի բաց վարէ . . . Ա՞չ , որդիք
Արամեանք , անկենդանք ինձ թուեիք
և մեռեալք , և ահա տեսանեմ զի գեռ
ևս շունչ գոյ ’ի ձեզ , զեռ ևս խարուկէ
զսիրտս ձեր բոցն ատելութեան և մրմը-
ռեալ նախանձու . զեռ ևս տեսանեմ
զձեզ զի զընդունայնութեան զհետ եր-
թայք , որով երբեմն յանէծս ցաւագինս
և ’ի մշտագիշեր արտասուս զձեր բա-
րեխնամ հարսն յորդորեցէք , որք ըզ-
թարգմանիցն երանաշնորհս թափա-
ռական ընդ օտար աստեղքք նժդեհա-
ցուցէք , որ կոյր և մոլորեալ զՊարիգո-
րիոս զանդաշեցէք զանմարմին հրեշ-
տակն . որով տապաստ յերկիր զարքու-
նականն արկեք զաւազան , արկանէիք
իմն և զքահանայութեանն եթէ թո-
ղեալ էր ձեզ Աստուծոյ . և արդ հիմ
փախստական զիմ հայրն տանիք . ալիք
փրփրացեալք , ա՞չ , գէթ դուք գթու-
թեամբ ակնարկեսնիք ’ի հայրենին աշ-
խարհ . հողմունք մի ցողագին շնչիցէք
զի մի Ախիթար ’ի մէնջ հեռացի .
մեք անգէտք և անտեղեակք մերոյ բա-
րելաւութեան , դուք զմեզ կշտամբե-
ցէք . . . Այլո՞հինձ , արացան մկանունքն
շնչեցին հողմք , առին տարան զԱխի-
թար , յափշտակեցաւ ’ի մէնջ արդարին ,
զի զուք զհետ նորա ձայն արկեալ գոցի-
ցէմ :

(ԱՏԱՐՑՆ ՅԱՐԱՋԻԿԱՑՈՒՄ)

ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱԱԽՕՍՈՒԹԻՒՆ

“ Երբ գանուած հեռալիւն հը :

Այս տարուան ապրիլ ամսոյն վերջերը
Օպրուց գետին յատակը փորելու ատեն ,
որն որ Կալիցիայի Բատողիայն Ոտ-
ուաց Բատողիայէն կը բաժնէ , խիստ հե-
տաքրքրական բան մը գտնուեր է : Այ-
ս գետիս ան մասին մէջէն , որ Լինցքո-
վի գեղին անմիջապէս վարերը կ'իյնայ ,
քարէ վիթխարի արձան մը ելեր է ,
զորն որ անվնաս գետէն դուրս հաներ
են : Այս արձանիս բարձրութիւնն է
վեց մետր , և չորս գլուխ ունի , որոնք
ծոծրակէն իրարու հետ կպած են . և
ինչպէս որ հնագէտներուն կ'երևայ՝
Ավանդովիդի արձանը պիտի ըլլայ , որ
Ալաւեան հին ժողովրդոց մեծ կուռ-
քերէն մէկն էր : Եւ թէպէտ զրեթէ
հազար տարիի մօտ ջրին մէջ մնացեր է ,
բայց ’ի վերայ այսր ամենայնի ամենեւն
վնաս մը կրած չէ : Ախայն թէ կոր-
սուած կ'երևանան իրեն ձեռքի աղեղը
և եղջիւրը , որոնց առջինը պէտք էր որ
աջ ձեռքը բռնած ըլլար , իսկ երկրորդը
ձախ ձեռքը :

Այս չորս անմորուս գլուխներուն
ալ մազը գանգուը է ու երկայն խոպ-
պիկներով , ինչուան իրենց երեսին վրայ
կ'իջնայ : Բանուածքը շատ աղաւոր է ,
և ըստ բաւականին դուրս կը ցատքեցը-
նէ երիտասարդական անվախ կտրմու-
թիւն մը , որ այն չաստուծոյն յատուկ
ընաւորութիւնն էր : Ավանդովիդ հին
Ալաւներուն պատգամատուն էր : Պա-
տերազմ մը սկսելէն կամ հարկաւոր
բանի մը ձեռք զարնելէն առաջ՝ իրեն
խորհուրդ կը հարցընէին , ու անոր ’ի
պատիւ Ճերմակ գեղեցիկ մատակա-
խազ մի մը իրեն կը նուիրէին : Պատգա-
մը չհարցուցած՝ նախ իրեն ընծայուած
ձին զէպ ’ի նպատակ մը կը վազցընէին .
թէ որ ձին նպատակին աջ ոտքով

Հասնէր՝ բարի գուշակութիւն կը սե-
պէին։ ընդհակառակն թէ որ ձախ ոտքո-
վը կոփէր՝ գէշ ու ձախող կը սեպէին։

Ալանդովիդ հռչակաւոր մեհեան մը
ունէր Պալգիկ ծովուն մէջի եղած
Իուկէն կղզւոյն հիւսիսային կողմերը,
ուր որ ամէն տեղէ ուխտի կու գային և
իրեն մեծագին ընծաներ կը նուիրէին,
և երբեմն իրեն սեղաններուն վրայ գե-
րիներ ալ ողջակէզ կ'ընէին։ Իյս ա-
մենահարուստ մեհեանը Տանիմալքայի
Ա աղդէմիր Ա. թագաւորը հիմնայա-
տակ կործանեց 1168^ա Իուկէնը առ-
նելէն վերջը։

Ալանդովիդ շաստուածոյն աս արձա-
նը միայն կը ճանչցուի, որն որ Ինթոց-
քի կոմնը, որովհէտև իրեն կ'իյնար աս
արձանը՝ իր կալուածներուն մէջ զըտ-
նուած ըլլարուն, Վրաքովիայի համա-
լարանին ընծայեց, և Ալաւեան հնու-
թեանց թանգարանին մէջ զրուեցաւ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՍԷՐ

Եթէ ես ամպ էի
Աահելով ընդ այեր,
Երեկո ոչ յուզէի
Աըբրկաւ ըզծովէր։
Եթէ վայր դալարի
Օերթ սիրուն ովասիս,
Ուզեորըն բարի
Վայր հանգչել 'ի ծոցիս։
Եթէ տունկ սաղարթուն,
Յաւոց գեղ և դարման,
Իռուակին դալարուն
Լինէի ապաստան։
Եւ եղնիկ ծարաւի
Լնետից կարեվէր
Էնդ յիմումն ըստուերի
Կազդուրեալ ձողոպրէր։
Ուկ վարդից դարնայնոց
Հունձս առատ ունէի,
Աղուակին սիրայնոց
Օայն յաւար մատնէի։

Ես ըզգօն մըտերմին
Կազմէի դիւր շաւիզ,
Եւ պըսակ քերթողին
Չիթենւոյ շառաւիզ։
Ուկ խաղող և հատիկ
Ենայնոյն էր առ իս,
Եսէի ցաղքատիկ,
Եւ ըզհացս ու զգինիս։
Ուկ ձըմեռն էի ցուրտ,
Ո՛չ տէր, զի գործէի.
Եւ աղքատ ժողովուրդ
Փայտ և հուր բաշնէի։
Եթէ քաղցր էի յոյս,
Դեպէի առ թըշուառս
Ինձեռել աստ խրախոյս
Եւ զանտի պատմել փառս։
Իյլ ես հէք եմ մանուկ
Եւ չունիմ ինչ բարի
Ինյց սըլտիս արտասուք
Յօղ ցաւոց աշխարհի։

ԵԴՄՈՆՏ ՄԱՄՊՐԵ

Տ' ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՏԵԽՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Դ.

ԳԱԿ ԴՐԱՅ:

Բներքերուն աժէքը երբոր ստըկի
վրայ առնուի զին կ'ըսուի։ Իստ ինքեան
ստակը ուրիշ ապրանքներէն աւելի իրա-
ւունք մը չունի բերքերուն աժէքը կը-
տրելու. և միայն ծանրագին մետաղնե-
րուն մէկ քանի յատկութեանցը համար
է որ մարդիկ ստըկի կը վերածեն բերքե-
րը, անոնց աժէքին չափը իմանալու հա-
մար։ Տնտեսականք կ'ըսէն թէ երկու
կերպ կայ կարելի ձշգութեամբ բերքե-
րուն գիները իմանալու. մէյմը ընծայնան
ու պահանջէց¹ օրէնքը, մէյմըն ալ հասպ-
ան կամբէրէց² ծախտը³։

Ինծայումն ըսելով կ'իմացուին ան

¹ Գ. Լ. Le prix.

² Գ. Լ. L'offre et la demande.

³ Գ. Լ. Frais de production.